ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 104 – Ա

10 փետրվարի 2022 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿԻ Մ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 468 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 44-րդ կետի պահանջը, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նիստի 2021 թվականի դեկտեմբերի 24-ի N 6 արձանագրությունն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի եզրակացությունն, ինչպես նաև Կարինե Գրիգորյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Կարինե Գրիգորյանի հետ 2022 թվականի փետրվարի 10-ից կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 10.02.2022-10.02.2027թթ.:

2. Կարինե Գրիգորյանի հետ 2022 թվականի փետրվարի 10-ից լուծել 2017 թվականի փետրվարի 9-ին կնքված N 468 աշխատանքային պայմանագիրը:

10.02.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ